Հավելված
ՀՀ կառավարության 2008 թվականի
դեկտեմբերի 4-ի N - Ն որոշման

# Ց Ա Ն Կ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԸ ՏԵԽՆՈՔԱՂԱՔԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

| NN ը/կ | Միջոցառումը | Նպատակը | Արդյունքը | Ֆինանսավորումը | | Կատարողը | Կատարման ժամկետը |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | ՀՀ պետական բյուջե | մասնավոր հատված | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| 1. | Ծրագրի ընդհանուր համակարգման թիմի ձևավորում | ծրագրի համակարգում նախապատրաստական փուլից մինչև մեկնարկային փուլ | շահագրգիռ կազմակերպու-թյուններից և անհատներից կազմված համակարգման թիմ | - | - | ՀՀ էկոնոմիկայի նախարարություն այլ շահագրգիռ պետական կառավարման մարմիններ ու գործընկեր տեղական և միջազգային կազմակերպություններ | 2008 թ. |
| 2. | Ծրագրի նախապատրաստական փուլի կառավարման թիմում ընդգրկելու նպատակով միջազգային և տեղական փորձագետների ընտրություն | միջազգային չափանիշներին համապատասխան բիզնես-ծրագրի մշակում | տեխնոպարկի գործունեության բիզնես-պլան | 9000 հազ. դրամ | ԱՄՆ-ի ՄԶԳ մոտ 10 000 հազ. դրամ | ՀՀ էկոնոմիկայի նախարարություն գործընկեր միջազգային կազմակերպություններ | 2008 թ. |

08_1463

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
|---|---|---|---|---|---|---|---|
| | տեխնոպարկի գործունեության կառավարում | տեխնոպարկի կառավարման գրասենյակի ձևավորում | տեխնոպարկի գործունեության բիզնես-պլանի իրականացում | 25 000 հազ. դրամ | դոնոր կազմակերպու-թյունների համաֆինան-սավորմամբ | | 2009 թ. |
| 3. | Տեխնոնքաղաքում ընդգրկվելիք կառույցների և տարածքների կազմի ու գործառնական նշանակության հստակեցում, տարածքների և շենքերի ընտրություն ու գույքագրում | արտադրական, գիտական, պատմա-մշակութային և ենթա-կառուցվածքային ներուժի բացահայտում<br><br>դրանց նկատմամբ գույքային իրավունքները և ծրագրում ներառելու հնարավորություն-ները | հստակ տեղեկատվություն տեխնոքաղաքում ընդգրկվելիք տարածքների և շենք-շինություննե-րի վերաբերյալ ու հիմք՝ հատակագծի և մակետի պատրաստման համար | | | ՀՀ էկոնոմիկայի նախարարություն<br>ՀՀ քաղաքաշինության նախարարություն<br>ՀՀ տարածքային կառավարման նախարարություն<br>ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե<br>ՀՀ Շիրակի մարզպետարան<br>Գյումրի քաղաքա-պետարան և հարակից համայնքներ | 2009 թ. |
| 4. | Առաջարկել Գյումրու և հարակից համայնքների ղեկավարներին ժամանակավորպես ձեռնպահ մնալ հողամասերի տրամադրումից՝ մինչև տեխնոքաղաքի հատակագծի և մակետի պատրաստումը | տեխնոքաղաքի համար տրամադրվելիք տարածքների ընտրության հնարավորություն<br><br>սեփականատերերի հետ խնդիրների բացառում | տեխնոքաղաքին ներկայացվող պահանջներին համապատասխան տարածքներ և շենք-շինություններ | | | ՀՀ տարածքային կառավարման նախարարություն<br>ՀՀ Շիրակի մարզպետարան<br>Գյումրու քաղաքաղապետարան և հարակից համայնքներ | |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
|---|---|---|---|---|---|---|---|
| 5. | Տեխնոքաղաքի հատակագծի (կառուցապատման սխեմաների ներառմամբ) մշակում և մակետի պատրաստում. անհրաժեշտության դեպքում Գյումրի քաղաքի գլխավոր հատակագծի լրամշակում | կառուցապատման ենթակա տարածքների, շենք-շինությունների և ենթակառուցվածքների նախանշում | մակետի առկայություն՝ տեխնոքաղաքի ստեղծմանն ու զարգացմանը համապատասխան | 50000 հազ. դրամ | մասնավոր հատվածի համաֆինան-սավորմամբ | ՀՀ քաղաքաշինության նախարարություն ՀՀ էկոնոմիկայի նախարարություն | 2009 թ. |
| 6. | Ուսումնական և գիտահետազոտական լաբորատորիաների հիմնում՝ Նեյշնլ Ինսթրումենթս, Սան Մայքրոսիսթեմս, Սինոփսիս միջազգային ճանաչում ունեցող ընկերությունների, Եռաչափ մոդելավորման ասոցացիայի և Հայաստանի ոսկեգործների ու ադամանդագործների ասոցացիայի հետ | ուսումնական դասընթացների անցկացում<br><br>գիտահետազոտական ծրագրերի իրականացում | 3 և ավելի ուսումնական ու գիտահետազո-տական լաբորատորիաներ | 30 000 հազ. դրամ<br><br>25000 հազ. դրամ | 30 000 հազ. դրամ<br><br>մասնավոր հատվածի համաֆինան-սավորմամբ | ՀՀ էկոնոմիկայի նախարարություն<br>մասնավոր հատված<br>Գյումրու բարձրագույն ուսումնական հաստատություններ | 2008 թ.<br><br>2009 թ. |
| 7. | Ուսումնական դասընթացների անցկացում, գիտահետազոտական (R&D) ծրագրերի իրականացում | կադրերի պատրաստում<br><br>գիտահետազոտական դրամաշնորհների տրամադրում երիտասարդ գիտնականներին և սկսնակ ՓՄՁ-ի սուբյեկտներին | մինչև 10 գիտահետազոտա-կան աշխատանքներ | 41000 հազ. դրամ<br><br>20000 հազ. դրամ | մասնավոր հատվածի համաֆինան-սավորմամբ | ՀՀ էկոնոմիկայի նախարարություն<br><br>գործընկեր միջազգային կազմակերպություններ մասնավոր հատված | 2008 թ.<br><br>2009 թ. |
| 8. | Հիմնադրամի ստեղծում | կադրերի պատրաստում և վերապատրաստում արտերկրյա համալսարաններում<br><br>գիտահետազոտական դրամաշնորհների | սկսած 5-րդ տարվանից տարեկան 30 գիտությունների թեկնածու (Phd) գյումրեցի երիտասարդների առկայություն | 10000 հազ. դրամ | մինչև մեկ մլն ԱՄՆ-ի դոլար տեղական և միջազգային մասնավոր և դոնոր կազմակերպու-թյունների | ՀՀ էկոնոմիկայի նախարարություն գործընկեր միջազգային կազմակերպություններ, մասնավոր հատված | 2009 թ. շարունա-կական |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | տրամադրում | միջազգային չափանիշներին համապատասխան գիտահետազոտա-կան աշխատանքներ | | համաֆինան-սավորում | | |
| 9. | Ներդրումների ներգրավում | անդրազգային ընկերությունների ներգրավում<br><br>անշարժ գույքի շուկայի զարգացում<br><br>ներդրումային և ոլորտային ընկերություններ<br><br>գիտահետազոտական կազմակերպություն-ների ներգրավում | միջազգային չափանիշներին համապատասխան և միջազգային համբավ ունեցող ընկերություններից կազմված տեխնոքաղաք | | | ՀՀ էկոնոմիկայի նախարարություն | 2008 թ. շարունա-կական |
| 10. | Գյումրի քաղաքի Կումայրի պատմաճարտարապետական արգելոց-թանգարանի տարածքում բիզնես-կենտրոնի ստեղծում | տեխնոքաղաքի մասնակիցների համար գործարար ծառայությունների մատուցում<br><br>նորաձևության, արվեստի, ոսկեգործության, զբոսաշրջության ընկերությունների ստեղծում | Գյումրի քաղաքը գործարարությամբ զբաղվելու տեսանկյունից հանդիսանում է «Գործարար գերազանցության կենտրոն»<br><br>Կումայրի պատմամշակու-թային արգելոցի տարածքում առկա են նորաձևության, | | | ՀՀ էկոնոմիկայի նախարարություն<br>ՀՀ մշակույթի նախարարություն<br>ՀՀ քաղաքաշինության նախարարություն<br>ՓՄՁ ԶԱԿ<br>Գյումրու քաղաքապետարան (համաձայնությամբ) | 2009 թ. շարունա-կական |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | արվեստի, ոսկեգործության, զբոսաշրջության ընկերություններ | | | | |
| 11. | ՓՄՁ-ի սուբյեկտներում նորարարու-թյունների ու ժամանակակից տեխնոլոգիաների ներդրմանն աջակցություն | ինովացիաների ոլորտում գործող և սկսնակ ՓՄՁ-ի սուբյեկտներին աջակցում | ինովացիաների ոլորտում գործող և սկսնակ ՓՄՁ-ի սուբյեկտներ | ՀՀ ՓՄՁ-ի պետական աջակցության տարեկան ծրագրերին համապա-տասխան | - | ՀՀ էկոնոմիկայի նախարարություն ՓՄՁ ԶԱԿ գործընկեր միջազգային կազմակերպություննե ր (համաձայնությամբ) | 2009 թ. շարունա-կական |
| 12. | Ազատ առևտրի գոտու ստեղծման հնարավորությունների բացահայտում | Գյումրին դարձնել տարածաշրջանային սահմանամերձ առևտրի կենտրոն՝ հաշվի առնելով նրա աշխարհագրական դիրքը (սահմանակից է Թուրքիայի և Վրաստանի հետ) և առկա տրանսպոր-տային ենթակառույց-ները | Գյումրին տարածաշրջանային առևտրի կենտրոն | - | - | ՀՀ էկոնոմիկայի նախարարություն ՀՀ արտաքին գործերի նախարարություն ՀՀ տարածքային կառավարման նախարարություն ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն ՀՀ քաղաքաշինության նախարարություն ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե «Արմենիա միջազգային օդանավակայաններ» ՓԲԸ (համաձայնությամբ) | 2010 թ. |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

08_1463